

Թին մէջ լեցու 4 լիտր օղի . և մէկ լիտր  
բարկ օղի 34<sup>0</sup> : Ետքը համեմէ մեխա-  
կի ուլու և կամ ուրիշ համեմով մը ու  
վրան աւելցու հալեցուցած շաքարը :  
Եւ շիշի մը մէջ լեցուցած աղէկ մը գո-  
ցէ ու դիր արևու բոլոր ամառը : Ետքը  
քամոցէ անցու ու շիշերուդ մէջը լեցուր :  
Բաւաճիւն Կարնջի ծաղիկ . 11 Եւ լիպրէ  
շաքար հալեցու ջրով ու եփէ ինչուան  
որ շաքարանայ , վրան լեցու մէկ լիպրէ  
մաքրած Կարնջի ծաղիկ ու կրակին վը-  
րայէն մէկդի առ ու պարպէ հողէ ա-  
մանի մը մէջ , ու վրան լեցու 8 լիտր օղի ,

ու փայլուն Թղթով բերանը ծածկած  
ամանը դիր եռացեալ ջրոյ մէջ 8 ժամ .  
ետքը վար առ՝ Թող որ պաղի ու շիշե-  
րու մէջ լեցու :

Կարնջիդէն գտնուած երկիրներու  
մէջ , ամէն օր կը ժողվեն ծաղկներն  
ու շաքարով խառնած կը պահեն . և  
երբ ժողվելը կը լմննայ՝ այն ատենը  
կը շինեն ըմպելիքը . խառնած շաքարին  
չափն առաջուց առնելու է :

Եւս տուած օրինակներնուս համե-  
մատ ուրիշ ամէն տեսակ Բաւաճիւն  
ներ ալ ուզողը կրնայ շինել :

## Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Կ Ի Յ

Արևելեան վերջին խնդիրն ու պատերազմը <sup>1</sup> :

### 1855 — ԱՊՐԻԼ

10 . Լորտ Ռըսսէլ առ Լորտ Գլարէնտըն :

Խորհրդակցութեանց Ժողովոյն երեկուան ե-  
րեկոյեան նստին մէջ ծանոյց Պուլ կոմսը , Թէ  
Աստրիա մեծապէս գոհ է տեսնալով որ Ռուսիա  
յանձն կ'առնու Սև ծովուն չէզոքութիւնը , բայց  
չկարծեր որ նոյնպէս զիջանի նոյն տէրութիւնը իր  
զօրութիւնը նուազեցնելու կամ փճացնելու :  
Դարձեալ Աստրիա իր կողմանէ կ'առաջարկէ խօ-  
սիլ նոյնպէս երրորդ խնդրոյն վրայ , ինչպէս առ-  
ջի երկուքին . բայց որ և իցէ կերպով քանի մը  
նաւ աւելի կամ պակաս ըլլալու նկատմամբ ինքը  
չկրնար պատերազմ հրատարակել Ռուսիոյ դէմ :

— Լորտ Ճոն Ռըսսէլ առ Լորտ Գլարէնտըն .  
Աստրիա ամենայն կերպով կ'ուզէ որ , առանց  
այլ ևս սպասեցնելու Ռուսաց առաջարկութիւնե-  
րը քննուին : Ուրիշ կողմանէ ամենեւին հաւանեալ  
չէ Աստրիա Թէ հարկաւոր է Ռուսիոյ նաւա-  
կան զօրութիւնը նուազել : Չորս առաջարկեալ  
խնդրոց մեկնութեանը մէջ , ոչ այնչափ , կ'ըսէ ,  
Ռուսաց նաւական զօրութիւնը չափաւորելու վը-  
րայ խօսք կար , որչափ 1841ին գաշնադրութիւնը  
կրկին քննելուն և աչքէ անցնելուն վրայ , Եւրո-  
պիոյ հաւաստարակչութիւնը և հասարակաց օգու-  
տը պահելու նկատմամբ : Աստրիա՝ Ռուսիոյ դէմ  
պատերազմ հրատարակելու համար մի միայն օրինա-  
ւոր պատճառ ան կը սեպէր , Թէ որ Ռուսաստան  
չընդունէր օսմանեան տէրութեան ամբողջու-  
թեանը երաշխաւոր ըլլալ :

16 . Անգղիոյ Վեննա կեցող լիազօր գեսպանը

1 Տես հտ . ԺԳ , երես 15 , 92 , 159 , 191 ,  
223 , 255 , 286 , 334 . հտ . ԺԴ , երես 11 , 82 ,  
129 , 162 , 227 , 275 , 307 , 355 , 371 . ԺԵ ,  
երես 15 , 51 :

Լորտ Գլարէնտընին նոր գրութիւն մը կը հաղոր-  
դէ Ռուսաց զօրութիւնը չափաւորելու նկատ-  
մամբ : Ա . Ռուսիա Սև ծովուն մէջ չորս եռայարկ  
չորս ալ կրկնայարկ և վեց ալ աւելի պզտիկ նաւ  
ունենայ . իսկ գաշնակիցք իրենց կողմանէ նոյն  
ծովը չկարենան մտնել , և Թէ ոչ նոյն զօրութեան  
կէսովը : Բ . Տաճկաստան նորէն գրաւէ Դանու-  
բեան կղզիները որ Ադրիանուպոլսոյ գաշնադրու-  
թեամբն կորսնցուցեր է : Գ . Ռուսի-Ասիական  
սահմանները նորէն կանոնաւորել : Դ . Եւրոպա-  
կան ընդհանուր երաշխաւորութիւն տաճկի արգի  
երկրին ամբողջութեանը : Ե . Սև ծովու Ասիա-  
կան եզերաց վրայ եղած բերդերը նորէն չգրաւէ  
Ռուսաստան , որոնցմէ արդէն իր ջոքերը ետ քա-  
շած է : — Նոյն ամսոյն 18ին Մեծին Բրիտանիոյ  
արտաքին գործոց պաշտօնէին քարտուղարը կը պա-  
տասխանէ , Թէ պէտք է օտք կոխել Ռուսաց նա-  
ւական զօրութիւնը չափաւորելուն վրայ , և մեր-  
ժեւ հակառակ գրութիւնը : — Լորտ Ռըսսէլի ու-  
րիշ պաշտօնագիր մը առ Լորտ Գլարէնտըն : Արև-  
մտեան տէրութեանց ներկայացուցիչները կրկնե-  
լով իրենց խնդիրը , Թէ Աստրիա առ Ռուսաս-  
տան ընելու վերջնադրին մէջ , պէտք է իբրև գը-  
խաւորութեամբ գնէ Ռուսաց նաւատորմիդը նուազե-  
ցնելու խնդիրը : Պուլ կոմսը պատասխան կուտայ ,  
Թէ Ռուսաց նաւատորմիդը Տաճկաստանի ամե-  
նեւին վտանգ մը չկրնար բերել . և Թէ Աստրիա  
չկրնար պատերազմի մէջ մտնալ , միայն աս բանիս  
համար որ Ռուսաստան քանի մը նաւ աւելի կամ  
պակաս ունենայ : Ինքը միայն կը պահանջէ Ռու-  
սաստանէն որ իրեն նաւերուն ամբողջական թիւը ,  
պատերազմէն առաջ եղածէն աւելի չընէ . և Թէ  
որ Ռուսաստան իր նաւական զօրութիւնը աւել-  
ցնելու ըլլայ , կրնայ Տաճկաստան ալ նոյն համե-  
մատութեամբ իրենինը աւելցնել :

17 . Խորհրդակցութեանց Ժողովը նորէն կը  
սկսի : Կորչաքով իշխանը կը ծանուցանէ Թէ Ռու-

սաստան յանձն կ'առնուր խօսիլ երրորդ խնդրոյն մէջ եղած առաջարկութեանցը նկատմամբ . բայց իրեն լիազօր պատուիրակները ամենայն պատշաճ ծանուցութեամբ և միանգամայն անկեղծաւոր փափաքով միաբանութիւն և սէր հաստատելու համար, յանձն կ'առնուն այն առաջարկուած խնդիրներուն քննութեանը մէջ մտնալ, այսու դաշամբ՝ որ նոյն խնդիրները ան տեսակ չլլան, որով Ռուսաց կայսեր իր երկրին վրայ ունեցած իրաւունքը կարենան իրմէ վերցուիլ կամ բռնաբարուիլ: Տրուէն տը Լիւի հարցումն կ'ընէ, թէ արդեօք Ռուսաստան իր իրաւունքէն զրկուած կը համարի ինքզինքը թէ որ ազատութիւն չունենայ առանց պայմանի ուղղածին չափ պատերազմական նաւ չի նեւու Սև ծովուն մէջ . որուն պատասխան կու տայ Կորչաքով թէ Ռուսաստան որ և իցէ կերպով մը չկրնար յանձն առնուլ որ իրեն նաւական զօրութիւնը չափաւորութիւն որոշեալ թուով մը, եւ թէ դաշնագրութեամբ ըլլայ, և եթէ ուրիշ որ և իցէ կերպով:

— Լիպոյ Ռուսաց նաւահանգիստը անգղիացւոց նաւատորմէն պաշարման վիճակի մէջ կը գրուի . իսկ Ռիկայի ու Ֆինլանտեան ծոցերուն նաւահանգիստները ամսոյս 19էն սկսեալ ինչուան 28ը պաշարման վիճակի մէջ պիտի գրուին:

18. Ծանուցագիր լորտ Ռըսսէլի առ լորտ Գլարէնտըն . Պուլ կոմսը նոր առաջարկութիւններ ըրաւ: Ա. Երաշխաւորութիւն ամենայն դաշնակից տէրութեանց, Օսմանեան պետութեւն ամբողջութեանը համար: Բ. Սև ծովուն մէջ (Ռուսաց ունեցած զօրութեւն) հակակշիռ զօրութեան մը գրութիւն: Գ. Ռուսաց նաւատորմիդ ան թուոյն վերածել, ինչ որ պատերազմէն առաջ էր: Եթէ Ռուսը մերժէ այս առաջարկութիւնս, Աւստրիա դաշնակցաց հետ միաբան պատերազմի կ'ելլայ ընդդէմ Ռուսաց: — Լորտ Գլարէնտըն լորտ Ռըսսէլի պատասխան տալով, Աւստրիոյ առաջարկութեց երկրորդ խնդիրը կը մերժէ:

19. Արձանագիր Վեննա եղած խորհրդակցութեանց ժողովոյն . Ժողովքը սկսելուն պէս Ալլի փաշան կ'առաջարկէ որ Տաճկաստանի ամբողջութեանը երաշխաւոր ըլլան հինգ տէրութիւնները: Ամէն տէրութեանց պատուիրակներն ալ կ'ընդունին այս առաջարկութիւնս . միայն Ռուսիոյ պատուիրակը կը ծանուցանէ թէ Ռուսաստան պատերազմի առիթ չսեպեր այս ամբողջութեան եղծանիլը: Աս բանիս անմիջապէս ետեւէն Տրուէն տը Լիւի հետեւեալ առաջարկութիւնս կ'ընէ: Ռուսաց կայսրը և Սուլթանը կը պարտաւորուին փոխանակաւ Սև ծովուն մէջը չորս եռապարկ և չորս ալ կրկնապարկ նաւ միայն ունենալու: Առաջորոնի և Տարտանեւլի անցքերուն գոցուելու կանոնագրութիւնը, որ 1841 Յուլ. 13ին դաշնագրութեամբը սահմանուած է, անխախտ մնայ: Իսկ այս դաշնագրութեանս մասնակից եզոզ տէրութիւնքը, որոնք Սև ծովուն մէջ կալուածք մը չունին, կարենան Սուլթանէն իշխանութիւն առնուլ հրամանագրով մը (որն որ հինգ օր առաջ պէտք է որ խնդրեն) Սև ծով մտնալ . բայց Ռուսաց և Տաճկաց ունեցած նաւերուն կէս թուովը միայն:

20. 16,000,000 լիրա սղերինի նոր փոխառութիւն մը կ'առաջարկուի անգղիացւոց հասարակաց խորհրդանոցին: 24ին կը հաստատուի առաջարկութիւնը խորհրդարանէն:

24. Երկոտասաներորդ գումարումն խորհրդակցաց ժողովոյն որ 'ի Վեննա:

— Կորչաքով իշխանը նոր առաջարկութիւն մը կ'ընէ, որով կ'իմացընէ թէ Ռուսաստան ընդդիմութիւն մը չունի 1841ին եղած դաշնագրութեանը փոփոխուելուն, յայտմ մասին որ ասկէց ետքը ամէն տէրութեանց պատերազմի նաւերը ազատապէս կարենան անցնիլ Տարտանեւլի ու Վոսփորոնի անցքերէն: Իսկ պատերազմի ժամանակ իշխանութիւն ունենայ Սուլթանը այս ազատութիւնս կամ բոլորովին վերցընելու և կամ չափաւորելու: Արեւմտեան տէրութեանց և Տաճկաստանի պատուիրակները կը ծանուցանեն, թէ չեն կրնար իրենք այս գրութեանս վրայ խօսիլ:

— Սարգենիոյ խաւրելու զօրքին առաջին բաժինը ճամբայ կ'ելլայ Ճենովայէն:

23. Լորտ Ճոն Ռըսսէլ կը մեկնի Վեննայէն:

24. Լորտ Բալմէրսդըն կը ծանուցանէ հասարակաց խորհրդանոցին, թէ Վեննայի խորհրդակցութեց ժողովը առ ժամս 'ի կախ մնաց . վասն զի Ռուսիա չընդունեցաւ Անգղիոյ, Գաղլիոյ, Աւստրիոյ և Տաճկաստանի առաջարկութիւնը չափաւորելու իր Սև ծովու նաւատորմիդը . և կամ բոլորովին խափանելու Սև ծովուն մէջ ո' և իցէ տէրութեան պատերազմական նաւուց երթեկը, առանց ընդունելութեան արժանի առաջարկութիւն մը ընելու:

26. Երեքտասաներորդ գումարումն: Ռուսաց պատուիրակները նոր առաջարկութիւն մը կ'ընեն: Յօդուած Ա. Տարտանեւլի և Վոսփորոնի կիրճերուն խաղաղութեան ատեն գոց մնալուն համար եղած առջի պայմանագրութիւնները անփոփոխ մնան: Յօդ. Բ. Սուլթանը ազատութիւն ունենայ այս անցքերը բանալու այն տէրութեանց նաւերուն համար, երբոր իրեն տէրութեան ապահովութեանը վտանգ կամ սպառնալիք մը տեսնայ: Տրուէն տը Լիւի կը ծանուցանէ թէ դաշնագրութեան վրայ խօսելու համար իր ունեցած հրահանգին ուժովը իրեն բան չմնար ընելիք, և թէ եղած առաջարկութեանց մէջ անանկ բան մը չկայ, որով Ռուսաց Սև ծովուն մէջ ունեցած նաւական տարապայման զօրութիւնը չափաւորուի: Նոյն կարծեաց վրայ են Տաճկի պատուիրակներն ալ:

Պուլ կոմսն ալ իր կողմանէ կը զուրցէ թէ Ռուսիոյ այս առաջարկութեանս մէջ այնպիսի գլուխներ կան, որով կրնար խաղաղութեան վրայ աշխատիլ Աւստրիա: Իսկ Կորչաքով իշխանը, Ժողովքը ցրուելէն առաջ՝ կը զուրցէ, թէ Ռուսաց պատուիրակները իրենց խօսքը պահելու համար ձեռքերնէն եկածն ըրին, անանկ առաջարկութիւններ ընելով՝ որոնցմով կրնային դժուարութիւնները լուծուիլ:

Կը շարունակուի: